


ԲԱԺՆԵԳԻՆ
Ի Պուլկարիա
Տարեկ. 10 ֆր.
Վեցամս. 5 "
Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
Վեցամս. 6 "
Վճարիկա
2 Տղ. 30 օէնդ
ԿԱՆԽԻԿ



ՊԱՅՄԱՆՔ
Գրութիւնք եւ
չին տրուիր:
Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱՐԱԹԱՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

ОТГОВОРНИКЪ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, АДВОКАТЪ.

Ե. ՏԱՐԻ

ՓԵՏՐ. 23 ՇԱՐԱԹ 1902

ԹԻԻ 241

ԱԶԳԱՅԻՆ

ԴՈՎԵԼԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Նպաստից Յանձնաժողովը իր անցեալ չորեքշաբթի օրուան բացառիկ նիստին մէջ զբաղած է էն առաջ նպաստից սնտուկին տեւական հասոյթներ ստեղծելու խնդրով: Նկատելով որ Յանձնաժողովը միանգամայն նախկին Միացեալ բնկերութեանց յաջորդն է և յարգ կը հոգայ բացի Որբանոց և Արհեստանոցներէ, 97 նպատարնալ վարժարաններ, ուստի այս աւելի վարժարաններու դասադրքերը ձրիաբար հայթայթելու և տարեկան առնուալն 300 օսկիի չափ արագահովելու համար, որոշու է կոչում ընել կարող հեղինակներու և գնելով իրենց աշխատութիւնները տպել և ասով ստուարացնել Միացեալի դասագրքերու քանակը: Տիար Ռէթէոս Պէրպէրեան որ ներկայ է եղեր նոյն նիստին, խոստացեր է նուիրել իր երկասիրած գաղղիերէնէ ի հայ թարգմանութեան դասագրքին հեղինակի բոլոր իրաւունքները, զորս ժողովը շնորհակալութեամբ ընդունել և որոշեր է կոչում ընել նաև ուրիշ հեղինակներու:

Սոյն դովելի տնօրէնութեամբ, ասիէ հտըր կարգ մը շահամու գրաւաճառներու կողմէ հրատարակուած հարիւրաւոր տեսակ դասագրքերը հրապարակէն պիտի աւուրին, վերնան, և ազգ. վարժարանները խնամօք ընտրուած միօրինակ դասագիրքեր պիտի գործածեն, որով, ալքատուսանողը չպիտի պարտաւորի հրաժարեալ ուսուցչին հետ իր ձեռքն ունեցած դասագրքերէն ալ հրաժարեալ կամ հրաժարեալ չլինելու:

չին հետ իր ձեռքն ունեցած դասագրքերէն ալ հրաժարեալ չլինելու, նորեւ ստուցչին բարեկամ կամ շահընկեր գրաւաճառին գրքերէն ծախու առնելու, այնչափ դժուարութեամբ:

—Ս. Փրկչի Որբանոցի սաներէն Ստեյր Արհեստանոցներու երիտասարդը որ կահագործութեան վկայական ստացած է, բոլոր փափագանաց որոշուեր է զրկել իր ծննդավայրը, տեղւոյն որբանոցին մէջ իբր վարպետ ծառայելու: Յիշեալ երիտասարդ վարպետին համար պէտք եղած կահագործութեան վերաբերեալ գործիները հայթայթելու են Տեարք Տամատեան, Էրմէնեան, Մուրադաբեան և ալ բարիօէր անձինք:

—Կիլիկիոյ կաթողիկոսութեան համար այս անգամ ընտրելի նկատուած են.

Ստեփաննոս եպիս. Յովակիմեան, առաջնորդ Նիկոմիդիոյ:

Ներսէս եպիս. Ասլանեան, առաջնորդ Ռոմոսթոյի:

Յակոբ Աշոտ եպիս. Փափագեան, առաջնորդ Սամսոնի:

Խառն ժողովոյ որոշմամբ, այս վերջինը Ատանայի մէջ կատարուելիք կաթողիկոսական ընտրութեան համար պատուիրակ կարգուած է:

—Սղերգէն ձանուցուած է թէ կանխաւ Պուսէն զրկուած ասուհիներով 67 տղոց հազուատ շինուած է և այս առթիւ 23 օսկիի տնմիջապէս ծախք մը եղած է: Նպաստից Յանձնաժողովը որոշեր է զրկել այդ գումարը:

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ»

Տասնամեայ Տարեդարձի Հանդեսին

«Հայկ. Ընթերցարանի տասնամեայ տարեդարձի առթիւ կազմակերպուած Գրական—Երաժշտական Հանգէսին հաշուեկշիռը իստորե ներկայացնելէ աւմիջապէս ետքը, Կարգադիր ժամանակուսէ կուգայ ներկայ գրութեամբ իր խորին շնորհակալութիւնը յայտնել բոլոր այն ընթերցասէր ազգայիններուն, որոնք մասէն թէ հեռուէն, յիշեալ հաստատութեան յատկացմանը զարկ մը տալու համար, չուշացան իրենց բարոյական եւ նիւթական աջակցութիւնն ընձեռել:

Յարգանքով

Կարգ. Մանախումբի

Ատենադպիր

Գ. Յուրիասեան

Ատենապետ

Օ. Սարաֆեան

Մ Ո Ւ Տ Բ

	Ֆր. Մնդ.
Տոմսակներու վաճառումէ գոյացած	378. —
Նուէրներէ	101. 30
Լուսանկարներէ եւ Պիւֆէէ	51. 85
	515. 15

Ե Լ Բ

	Ֆ. Ս.
Տպագրութեան եւ փոստայի ծախք	42. 40
Պիւֆէի, լուսանկարի եւն.	35. 80
Մանրագրեր, ծախքեր	13. 30
Երաժիշտ գաւառութիւն	10. —
Պատրաստ գրած	373. 65
Գանձելի	36. —
	551. 15

Ծանօթ—Այլ եւ այլ անձնաւորութիւններէ մինչեւ ցարդ ստացուած է նաեւ 19 կտոր գիրք, 3 հայերէն եւ ֆրանսերէն հանդէսներ, նաեւ խորհրդանկար մը որուն փորագիր լուսանկարները ի վաճառ հանուեցան:

Նոյնի

Ժ Ա Մ Ա Ն Ց

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Անգլիոյ մէջ զարմանալի կոտորածներ կան, մէջ երբ հանրակառքի կամ շոգեկառքի մէջ տուժակը չի ցուցնէ, գրամական տուգանքի

կը դատաւարտուի, ու եթէ չուզէ զայն վճարել, եթէ օր կը բանտարկուի:

Ծնողք մը եթէ իր զաւակը պատուաստել չի տայ, գրամական տուգանքի կը դատաւարտուի, ու եթէ չուզէ կամ չկրնայ զայն վճարել, կը բանտարկուի քանի մը ամիս:

Եթէ մէկը շոգեկառքին մէջ ծխելու յատկացեալ տեղը չերթալով նստած կառքին մէջ ծխէ, 50 շիլլին տուգանքի կը դատաւարտուի, ու եթէ չի վճարէ կամ չկրնայ վճարել զայն, մէկ տարի անտարկութեան կը դատաւարտուի:

Այս եւ այլ արարիւթի կանոնաց դէմ միշտ դիտողութիւն ու բողոքներ կը լսուին, սակայն կառավարութեան կողմէ ամենեւին կարեւորութիւն չի տրուելով, ճշգրիտ կը դործադրուին հաստատեալ կանոնները:

ՍՈՒՑ ՄԵՌՆԱԼԸ

Չորս զաւակաց հայր խեղճ Գաղիացի մը, Սիմոն անունով, տեսնելով որ սպառելու վրայ է ձեռքն ունեցած գրամակալութիւնը, զայն նորոգելու համար հետեւեալ խորամանկութիւնը ի գործ կը դնէ.

Կիրակի օր մը իր կնոջ ու զաւկներուն սուգի հանդերձներ հազցնելէն ետքը, ինքն ալ գազադի մը մէջ մտած՝ վրան գոցել կուտայ եւ իբր մեռեալ Սէն—Բօլ եկեղեցւոյն բակը կը տարուի:

Անցորդք խեղճ կնկան եւ տղայոց արձակած ողբերէն ի գոթ շարժեալ, Կսկին առատ առատ ողորմութիւն տալ եւ մխիթարելու համար կը շրջապատեն զանոնք, որոնց ոտի քսուած աչքեանդադար շուր կը վալէր:

Անցորդներէ մին, գազադին քովիկը նըստած սուտ մեռեալին կնոջը մօտենալով կըսէ.

—Սիրելիս, անհոգ եղիր, մխիթարուէ՛, առաւինդ թաղելէն վերջը ես զքեզ երջանիկ պիտի ընեմ, կարծեմ 50,000 ֆրանքի եկամուտ մը կը բաւէ մեր երկուքին:

Սուտ մեռեալը, որ այս խօսքերն լսած էր, իբր թէ բարկացած՝ գազադին ծածկոյթը մէկդի կը նէտէ, գոչելով:

—Ախ, պարոն, ողջ ըլլալու էի օր, այդ խօսքերուդ ծանրութիւնը քեզի հասկցնէի:

Հոն խառնուած բազմութիւնը, Սիմոնին խորամանկութեանը վերահասու եղած, Կսկի ծափահարել եւ աւելի կը վարձատրէ զայն:

Հաջկ է բսել թէ 50,000նոց պարոնը, որ իւր խեղճ ընկերներէն մին էր, եւ որ վարձքով

ձեռք մը նոր հագուստ հագած էր, բազմաթիւ նը խոնուած առեն այնպէս խօսելու հրամանը առաջուց առած էր սուտ մեռելային:

Քանի մը օր վերջը, Բրքի Ժողովարարի մէջ հետեւեալ ազգը կը կարգացուէր:

«Մայիս 16 կիրակէ օրը, Սէն—Բուրկից—ուոյն բակը ունեցած ՆԵՐԿԱՅԱՅՄԱՆՍ զուտ հառոյթը ելած է 357 ֆրանք»:

(Խաղաղ)

ՍԻՄՈՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

Հայ ամուսիններ — մեծաւ մասամբ — իրենց կնիկներէն ինչ կը պահանջեն

Հայ տիկին մը հետեւեալ կերպով կը շարէ՝ Էրիկ մարդոց կնիկներէն պահանջած բաները:

Տուն մտնելուն պէս, կուգէ որ կերակուրն պատրաստ ըլլայ, և ձայն տուածին պէս կինը առջին վազէ:

Կը պնդէ, թէ Էրիկ մարդիկ ամէն բան, մինչեւ իսկ տոց կերակուր կերցունելը և լաթ լուարը կնիկէն աւելի լաւ գիտեն:

Այնպէս կը հաւատայ թէ աշխարհ միայն իրեն համար ստեղծուած է:

Կը յամար թէ կանանց տարիքը աւելի ճիշդ գիտէ, որչափ իւր տարիքը:

Հիւր կը բերէ տուն, առանց կնոջ հաճութիւնն առնելու և պատրաստ ըլլալն իմանալու: Բայց եթէ օր մը կինը հիւր մը ունենայ, մինչև իսկ մայրն ու քոյրը ըլլայ, մեծ աղմուկ կը հանէ:

Կը կարծէ թէ կնոջը հագնելիք զգեստին վայելչութիւնը կնոջմէն աւելի ազդէ գիտէ:

Շապիկին վրայ կոծակ մը պակաս տեսած առանց կոխ կը հանէ:

Աինը կը յանդիմանէ՝ երբ դրամ ուզէ, տունս կը կործանես կոր ըսելով, կարծելով թէ տունը առանց դրամի կը դառնայ:

Անոջմէն կը պահանջէ՝ սենեակները աւելի, տախտակները սրբիլ, գորգերը մաքրիլ, բան մը չկատրել, և ամենին բան մը նորոգելու չեղնել:

Կուգէ որ կինը երբեք զբօսանքի մը չերնէ. այլ տունը նստի առանձին և տղաքը նայի:

Աինը բան մը ուզած առանց, թէ և փոքրիկ բան մը ըլլայ, կոխ կը հանէ անոր հետ:

Կուգէ, որ տանը ծախքը չաւելնայ, որչափ որ ալ տղաքը աւելնան:

Կուգէ ու կինը իրեն հաւատարիմ ու բարեկամ ըլլալ, թէ և ինքը կէս գիշերին գալ տուն: Էրիկ մարդը ամեն զբօսանքի պահուի, և առանց անցած տունը դառնալու ժամանակ՝ կինը արթուն ու պատրաստ դըտնուի:

ՃԵՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

Ամանս Բոժոժիկ եւ Ընկ.

Մուսաղլա. — Աղնուաշուքի հովեր առնել երազող երկու տիկնաւոր օրտէրացէս և . . . զաղտնապէս իրենց համար պատրաստել տրուած քօղիւմները հագնելով, առաջիններէն գաղտնի, ժամը 1 ին պարահանդէս երթալու համար իրենց քովալիկներովը ճամբայ ելան, բայց Սանդրալի փողոցին մէջ լսելով որ գիմակաւորուհիներուն ալ գլմբերը նախապէս պիտի քննուին, բան մը որ տոմակներուն մէջ չէր նշանակուած, օձիքնին ձեռք չի տալու համար ճամբանին փոխեցին և տունացի սրճարանը մտան, ուր 5 վայրկեան հանգիստէ մը վերջը՝ տրտմութեամբ տուներնին վերադարձան, ամիսներէ ի վեր երազած «մէնջուր էյլէնճէններէն» մահրում մնալով:

Բոժ. — Հէմէն Տէրը միտիւթարեսցէ:

Վառնա. — Շուտէնէն հոս փոխադրած Սինոպի հերոսը՝ կեդրոնական բանտի պարտէզին ծառերուն ճիւղերը ոչխաւ համրել:

Թասրու Սանդրալ. — Անցեալ ուրբաթ գիշեր, ներկայացման պահուն, երկու տիկնաներ որոնք հանդիսաւորահին մէջտեղն նստած էին, հետերին բերած ջուրին կըկըրը հինգ վայրկեանը անգամ մը փոխն ի փոխն տնկելով՝ նոյն իրիկունը կերած ֆիլեօնը ֆեյսապին կրակը կը մարէին:

Նոյն. — Սրահին մէջ գտնուող տրիչ հանգիստես տիկին մ'ալ իր նորածինը ճանաչանա կընէր:

Քաւյաթա. — Տիկին Յասինէի ամուսինը որոշեց «Հայեղի» գէմ դատ բանալու:

(Հայելի ալ պատրաստ է իր գրածները հաստատելու):

Բոժ. — Ինծի պէս շատ մը հետաքրքիրներ ալ պատրաստ են նոյն դատին ներկայ գտնուելով ստամբուի սուտիկէ անհանգստութիւն ունեցող այդ պարոնին ո՛վ ըլլալը հասկնալու:

ԴԱՐԱՄՏԻԿ ԲԱՌԱՐԱՆ

- Կեղծանուն. — Դիմակ մը .
 Լրագիր. — Դիմակաւորներու պարասրահ:
 Խմբագրատուն. — Պարասրահին պիւֆէն:
 Յօդուածագիր. — Երկու բառ քով քովի չարօր:
 Քննադատութիւն. — Վերջին մօտա. Զինաստանէն եկած:
 Քարոզ. — Մամիկ/ս հեքիաթները:
 Սխալ. — Աններեւի մեղք:
 Խմբագրապետ. — Աղէկ նաւ (ըստ հաճոյս հովերուն):
 Պատմագէտ. — Հոյսենթացիք ե՞րբ կը բընանան, Զուլունքը ի՞նչ կ'ոտեն:
 Բանագոյութիւն. — Նուսթիէ գլխակերպ:
 Ութիւն. — Հին սխտ մը Նոյն մնացած մեր վարժարաններուն յատուկ:
 Տէմօտէ. — Մեր լրագիրներուն հոմանիշէ:
 Գիտուն. — Խօսք հասկցող:
 Սրամիտ. — Այս ապրանքը սպառած է մեծաքանակ գումանտ մը եղաւ:
 Լի-ՀՈՒՆԿ-ԶԱՆԿ

ԿԻՆԸ

— Ինչ հարիւր կիներ, քառասուն և ութը ժամ տեղ մը բանտարկելէ վերջ երբ մէջերին մտնէք, պիտի տեսնէք որ ամէնքնին ալ երկու բանի վրայ միայն կը խօսին, հազուադէպ զարդ (Ասիկա) զուրցողը մեր կիներուն վրայ բնաւ գաղափար չունի եղբր, ո՞րովհետեւ եթէ զանոնք ճանչցած ըլլար, տարակոյս չկայ որ «բամբասանքը» չէր մոռնար):

— Տասնհինգ տարեկան աղջկան մը համար պարէ զուարճութիւն մը, քսանամեայի մը համար առիթ մը, և քառասնամեայի մը համար յոգնութիւն մըն է:

— Կին մը որչափ ալ ծերանայ, սա երկու բանը բնաւ չի մոռնար. իր հարսնութիւնը և իր երբեմնի գեղեցկութիւնը:

— Միևնոյն ժամանակ շատ մը մարդիկ երջանկացող կին մը, կրկար ստեն, երջանիկ չի կրնար մնալ:

— Էրիկ մարդիկ իրենց ուզածը կրնան կի-

ներուն համար. կնիկներն ալ իրենց ուզածին պէս կը գարծառեն էրիկ մարդիկը:

— Շատ դիւրին է կառավարել կին մը, եթէ սակայն, այդ դերը ստանձնողը էրիկ մարդ մը ըլլայ:

Զուրին փայլ փայլել

Զուրին վրայ քաշելու յաջող փորձ մը ըրեր է Աստրիական բանակէն հարիւրապետ Կրօման, այս նպատակաւ յատկապէս պատրաստուած տեսակ մը մոծակի միջոցաւ: Հարիւրապետին նըպատակն էր Դանոբին վրայ քաշելով իջնել Լինցէն մինչև Վիեննա, որ 10 միլոնի չափ ճամբայ մըն է և զոր կը ջանար կտրել ութ ժամէն:

Արդ, ջուրին վրայ քաշելու փորձը կատարելապէս յաջողած է, բայց հնարիչը չկրցաւ հառնիլ իր յուսացած արագութեան: Դանոբի միլոն տեղ միայն կրցաւ երթալ իր առաջին փորձին առնել, սակայն պէտք չէ մոռնալ թէ իր ետեւէն կը քաշէր փոքրիկ մակոյկ մը որուն մէջ կը գտնուէր իր կինը:

Դանոբի երկու եղբրքներուն վրայ աշխատող դիւղացիները սարսափահար մնացին ջուրին վրայ քաշող այս մարդը տեսնելով:

ԵՐԶՆԿԱՅԻ ՆՈՐ ՀԱՐՍԻՆ ԳՈՎԵՍԾ

Հարսին մարը է խանութ:

Ու ճէճէզը անհատնում:

Խուժնի, խուժաշ, չիժարի

Արծաթ չափրատու էնթարի:

Է հարսերնիս էտալի,

Ու կօծիկը սըրմալի:

Պաղչային մէջ վարդ բացուած,

Հարսը պուլի պէս հաղուած:

Պիւլպիւլ, վարդին քով մերթար,

Հարսը քեզի վարդ չի տար:

Նուռին կարմիր հատիկը,

Հարսին կարմիր մատիկը:

Վարդերու պէս թող բացուի,

Սիրամարդի պէս հաղուի:

Պիւլպիւլի պէս թող խօսի,

Գլխէն ոսկի թող հոսի:

Ուրախութեան բունիկը,

Ըլլայ հարսին սըրտիկը:

Հաւաքի՛ք Մ

ՊԱՐԱՀԱՆԴԵՍԸ

Երկուշաբթի իրիկուան ժամը 9ին արդէն Սանդրայի թատերասրահը երկսեռ բաղնիքեամբ մը լեցուած էր։ Սրահին զարդարանքը իր շքեղութեամբը ամենուրեք ուշիկը գրաւէր։ Դիմակաւորք շատ ցանցաւ կը տեսնուէին ասդիս անդին։ Կնահաճոյ բարեկազմ միւսիւներ սալոնին մէջ կը շրջէին, ղեկակցօրներուն բէշերը ալ և ձախ շարժելով, ու անհամբեր սպասելով պարերու սկզբնաւորութեան, իրենցմէ մէկ քանինքը կեցած տեղերին զբեր զբեր կը յատկուէին։

Դիմակաւորաց մէջ իր վրայ ամենէն աւելի ուշագրութիւն գրաւել տուողն էր զոյգ գիմակավ երիտասարդը որ գէպի ետ քալած ատենը գեղեցիկ օրիորդ մը կը ներկայացնէր, իսկ գէպ յառաջ քալած ժամանակը սեւ մուսիսով եւրոպացի երիտասարդ մը որուն օձիքին վրայ գնդապետ զով տեղաւորուած ժապաւէնին վրայ կը կարգաւորուէին ֆրանսերէն հետեւեալ բառերը. «Լէզա պիքան Տը շա յիւն» (յոսնի բնակչին)։

Երկրորդ նշանակելի դիմակաւորն էր թուրք գիւղացիի տարազով Ապոլին որ ծիծալաշարժ ձեւերովը բազմութեան մէջ կը պտաէր։

Երրորդը թէև ոչ այնչափ նշանակելի բայց և այնպէս կը ստիպուինք յիշել. հարսնուկ մ'ըն էր այն, որ ուղիղական սպիտակ շրջապատ մը հագած էր, վրան կարկտուած թաւիշէ քանի մը . . . սիրտեր և բանալիներ, որոցով թերեւս բանալով նոյն թաւիշէ սիրտերը կարենար դարմանել զանոնք ձեռքի շիշին մէջ գտնուած հեղուկին կաթիլներովը։

Նէ ստացու նախապէս խոստացուած առաջին նուէրը։

Դալով երկրորդ նուէրին, չգիտեմ ի՞նչ տեսակ ընտրութիւն էր որ եղաւ, վասն զի ստացուող մրցանակի արժանի զգեստ մը հագած չէր, կարգ մը հետաքրքիրներու պէս մենք ալ երբ պատճառը հարցոցինք, պատասխան անք որ «յոյն է եղեր, միշտ հայերուն նուէր տալը անպատշաճ է եղեր, ուրիշներուն վրայ գէշ տպաւորութիւն կը ձգէ եղեր, եղեր ու եղեր, չեմ գիտեր թէ դեռ ի՞նչ է եղեր» (Բոժ. — Երկան մընէր կըսեն եղեր)։

Չորրորդն էր մեր հանգուցեալ Լեւոն թաղաւորը, որ ալեւոր մաղբորովը սեւ սրտուն պիտերովը և թաղէ—բէրտահ եղած գէմքովը շնորհալի գիւրք մը առած՝ ալ և ձախ կըմբոյշխէր իր


բարեններն ու սէլամները և հակառակ իր բնականին, ի զուր կաշխատէր ծանրաբարոյ երեւնալ։

Աման, քիչ մնաց պիտի մոռնայի. իր փառայեղ ներկայութիւնով, ընկերանալան շարժումներով և մեղրախառն արտասանութիւններովը այս տարի ալ չէր մոռցած պատուել պարահանդէսը մեր տիեզերասաստ յօգուածագիրն՝ անուանեալն կաթկոյտ, սրուն համար բոլորովին աւելորդ էր դիմակ կրելը, քանի որ իր շարժումներովը ամբողջ քաղաքին ծանօթ է։ Հիանալի էին քառորդի մէջ իր ճառարն երբեմնի ուղղած ֆրանսերէն բառերը, որոնք մօտը եղողներուն կը յիշեցնէին հաւին ածելէն հոսքը բրած կըտկտակը, Դժբաղդաբար քովս աւելորդ թաշկինակ մը չունէի որ բերնէն թափած ֆրանսերէնները հաւաքէի ու հիմա ձեզի ներկայացնէի։

Վաղցը մինակ Պ. Կազկլտաքի ոտքերուն չի յարմարեցաւ, և ասիկա ալ զարմանալի չէր, ըսա որում իր բնական քաղաքը արդէն տեսակ մը վաղց ըլլալուն, չէր կրնար ընդհանուրին գիտցած վաղցին յարմարիլ, որուն համար վայրացած, նոյն գիշերէն իսկ խոստացաւ հրապարակաւ բոլորքն ալ անկանոնութեան հ գէմ։

Պարերու նկարագրութիւնով չեմ ուզեր ըզբայիլ, որոնք ամենքն ալ օրինաւորութեամբ անցան, թէև սալոնին պղտիկութիւնը քիչ մը արգելք կըլլար պարողներուն։

SOUTHO



Պարահանդեսէն վերջը

— Ինչ էր պալօին մէջ ըրածներդ, պարոն Սմբատ։

— Ի՞նչ ըրի որ։

— Դիմակով ու տարօրինակ կերպարանքով մէյ մը ասդին մէյ մը անդին կը վազէիր։

— Ի՞նչ մնաց ունի։

— Հապա վերջին ըրածդ՝ պարոն Թաղէոսին գրպանէն ստանի գողնալ ու զելը։

— Ի՞նչ կըլլայ եղեր. ի՞նչ գիշերուան կերպարանքը բնականաբար կերպարանք ըլլալուն համար պարտաւոր էի գողի քաղցիս ընել։

ՏՕՔԹՕՌԸ

Ծառայականս Ակնայ քաղաքի, վերի մահալ-
լէն, Յիսկենց պապային, Դահիկ Մամային
թէ՛սը, վիւրէ, նը՝ Հաճի Ֆըշֆըշէնց դիմացը
կու նստէանք, զաննս մեր ապապան ալ Պիթլի-
էնց պապային հետ իշ օրթըղի էին, տէօրդ եօլ
աղղին խանթի կու բանեցնէին բարու խէյֆէ-
ին տիպը, հըմայէկս կրցի հասկցուցէր էի թը
էս օվ իմ:

Կէչէնտէ, Դահիկ մամաիս հէքիմութեան
տէֆթէրը ձեռքս օնցաւ ու հըմայէկս հէքիմու-
թիւն անելու տի պաշայիմ, օրուն մէյ թէրթի-
պը իլանիս տիպը իշարէթ տի անիմ, հէչ ֆէօ-
քէրնիդ մի անիք, ժամընկու հէքիմնեբուն պէս,
մէյ մէկ բէնտէ ֆրանք վինչինթա չի տի առ-
նիմ, իմ վինչինթա էկած միւշթէրին սիւտին
հավալէ տըլլի, էրկու զուրուշէն բռնէ մինչ ի
հինգ զուրուշ, տեղս ալ թարիֆ անիմ տէ՛ մըկ-
քէրնիդ պահեցէք, Պալլիէնց լօգմանթային է-
սեւը, մօմէրա վեց, էկէր զիս ֆէօն չգտնէք նը,
բուսուլա մի ձգեցէք:

Տէֆթէրին մէջի գրուած սրտի ցաւի թեր-
թիպին սուրէթը:

Հինգ տիրէ՛մ ճամի լէօսիւնք,

Տասը " շիրէշ (շիրիշ):

Քչիյ մ'ալ խէյֆէի պէօնտ:

Էռոնց էմէնքը իրար խէռնելով մէծիւն մի
անելիւ է ու լմէն առտիւ մէյ մէկ խէյֆէի խա-
շուխ կուտէք, էկէր աւ իլաճը անելնէդ սըզրա
բան մի մնաց նը, էս տիրէկի պէս կօյներ իմ:

Յիսկենց Դահիկ

Շամշագրամ աղան կիրակի Վիշեր այնքան
գինովցած էր որ ամեն բան աչքին երկու կե-
րեար, տուն մտնելուն պէս կնկանը նայեցաւ,
կնիկը աչքին երկու երևնալուն՝ ըսաւ:

—Տէր Առտուած, ես մէկ հատը չէի կրնար
կոր պահել, աս երկուքը ինտոր պիտի պահեմ:

Դիշեր մը ընկերութեան մը մէջ հոգեփո-
խութեան վրայ խօսք կը բացուի:

—Կը հաւատա՞ք հոգեփոխութեան, սօքթօր,
կը հարցնէ հետաքրքիր տիկին մը:

—Ձգիտեմ, կը պատասխանէ սօքթօր: Բայց
եթէ հաւատայի որ հոգիները կը վերադառնան,
այլ ես չպիտի համարձակէի բժշկութիւն ընել:

Դպրոցական քանի մը աշակերտներ իրենց
մէկ ընկերը կը ծաղրէին ու կըսէին:

—Ձե՞ս ամէնար, երեք տարի է որ առաջին
դասարանին մէջն ես:

—Է ինչ կըլլայ, տասը տարի է քի իմ վար-
ժապետս ալ առաջին դասարանին մէջն է:

Շատախօս մը մարդու մը հետ կը խօսէր:

—Թերես գլուխ ցաւցուցի, ըսաւ ամենէն
վերջը:

—Վնաս չունի, ուզածնուդ չափ խօսեցէք,
պատասխանեց միւսը, ես ձեզի մտիկ չեմ ըներ
կոր:

Նոր հարստացող պարոն մը, երևելի երգա-
հան Ռօսինին յուշատետր մը ներկայելով, կա-
ղաչէ որ բան մը գրէ անոր մէջ:

—Որովհետեւ, կըսէ վաղը պիտի մեկնիմ
Բարիզէն, ու թերես մեծ վարպետդ տեսնելու
երջանկութիւնը չունենամ:

Ռօսինի նեղացած՝ գրիչն առնելով, յուշա-
տետրին ճերմակ թերթերէն մէկուն մէջտեղը կը
գրէ:

«Երթաք բարով»:

Տիկին Յասմինէ պարահանդէս երթալու հա-
իր արդուզարդովը զբաղած էր:

—Մայրիկ, ըսաւ փոքրիկն Աշոտ, ծառի մը
տերեւները ամենքն ալ իրակա՞ն տերեւներ են:

—Անշուշտ, այդ ալ հարցնելի՞ք բան է:

—Ինչ գիտնամ, դուն ալ գլխուդ վրայ այն-
չափ կեղծ մազեր կը դիես որ իրականէն զա-
նազանելը անկարելի է:

Ա Յ Ի Ն Ե Ի Լ Ե Թ Ա Յ Ի Ֆ

Պ Ի Ն, Պ Ի Ր Ա Տ Է Տ

(ՄԻՒՆՏԵՐԻՃԱԹԸ)

Կիւտիւրիւճիւ ֆգրալար վէ Հիքիայէր: Մալիւմ-
թը ֆէննիյէ: Լուզաթը Լէթայիֆ: Ֆէննի Էյլէնճէլէր
վէ Բէսիվի Պիլմէճէլէր:


160 սահիֆէտէն իպարէթ օլուպ, բէյաէրբէյ
նէշր օլունան մէկքիւր քիթապըն պիրինճի ճիլ-
տի խիթամ պուլուպ, իտարէխանէմիլդուտ սա-
թըլմագտաւ աըր ֆիյ 2 ֆրանք:

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (47)

ՈՐՆԵ ՏՐ ԲՕՆ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

ՊԱՐԹԻՐ-ՄԱՄԱԿՆԵ)



Այս նամակ Մէնկին ձեռքը հասաւ Հոնկ—Քոնկէ զարձէն բտնըչորս ժամ՝ հտըր . բայց որովհետեւ բոլորովին ուրիշ լուրերու կը պատրաստուէր, մինչեւ ծայրը չկարդաց զայն և չկրցաւ ժպտիլ որկրամուկան հեռապատկերին զոր նաւապետը կը բանար իր առջեւ, վասն զի այն տեղն ուր կ'իմանար Չուէն մահը, կարծեց թէ տեսողութիւնը կը պղտորէր և թիկնաթոռի մը մէջ ինկաւ ամենաբուռն յուսահատութեան ենթակայ :

—Ի՞նչ ընել, ի՞նչ ըլլալ, կը մըմնջէր ապուշ երեւոյթով մը : Աս Բերբինսը կերեակայէ թէ Ն. Բարձրութիւն շնորհ պիտի ընէ ինծի : Ա՛հ, չճանչնար զան : Մանաւանդ կ'ը ցաւի կնոջը և այն անմիտ Ի—Թէին վրայ : Է՛յ Ես : Միթէ Ես գացի գտայ զանոնք : Թըշուառական Չու : Ինչո՞ւ համար քաջի պէս չմեռար հասարակաց հրապարակին վրայ, փոխանակ շան պէս երթալ խեղդուելու : Ա՛հ, Պառտան վկայ, կորսուած եմ : Հարի՛ր հարուած . . .

Եւ չկրնալով խօսքն աւարտել, եղիոնադատ տանի խոշոր նախագահը սկսաւ հեծեծալ :

Այս վիճակին մէջ անցուց օրուան մնացած մասը և երբ, խոնջ ու յուզուած, որոշեց անկողին մտնել, քունը անդադար վրդովուեցաւ ահաբեկի մզմանջնեւով : Երբեք իր առջեւ կը տեսնէր՝ քստմնելի շուրթով՝ բոլոր այն անձերը որոց հետ առիթ ունեցած էր զբաղելու ամսէ մը ի վեր : Չուն, Սոլ—Պրոտէն, Ի—Թէն, Բերբինսը, տիկին Լիու, կեղծ կախեալը, մուրացկաններուն իշխանը, Քոնկ իշխանը և գահիճն իսկ : Յետոյ, կը թուէր իրեն թէ գահիճը կը հալածէր ահագին կարմիր յամուկ մը, և փոխանակ անոր վրայ իջեցնելու իր Մէնկին վրայ կ'իջնէր ահաւոր պամպուն :

Յետոյ ինքզինքը կը տեսնէր աքաժոնէ ծանր դադաղի մը մէջ, որուն վերեւը կը կենային իր ծառաներէն երկուքը, տխուր և մտամոլոփ :

Բարեբախտաբար արշալոյսը եկաւ զժբախտ դատարն ազատել իր ցնորակոծութենէն և վասն զի միտ-

քը վերջապէս պիտի ընկճէր : Երբ ինքզինքը նորէն գտաւ իրեննորուն մէջտեղ . քիչ մը ոգևորուեցաւ և բաջութիւնը ունեցաւ մտածելու թէ ի՞նչ պիտի ըլլար : Փոխարքային երթա՞ր : Միտքէն կանցունէր թէ և, սակայն կը վտնար որ անօգուտ դիմում մը կ'ընէ :

Այն ատեն հաճելով յիշել տիկին Լիուն որ թեւրեւ իրմէ աւելի աղէկ գիտէր իշխանին իրական դիտումները, մարդ չըկեց բանալ զայն բերելու համար :

Սոլ—Պրոտէն մայրը շուտով համակերպեցաւ այս հրամանին, որովհետեւ անհամբեր էր իմանալու թէ վերջապէս իր աղջկն ազատա՞ծ է և երբ Մէնկ որորմուկ կերպարանքով մը ընդհակառակն ըսաւ թէ ամեն յոյս կորսուած էր, խեղճ կինը, առանց խօսք մը արտասանելու, տժգոյն ու դողահար, խուցին դուռն ուղղուեցաւ :

—Է՛յ, ի՞նչ, կերթա՞ր կոր, գոչեց մանտարէնը ծամբան գոցելով : Գաղափար մը, կարծիք մը չունի՞ր :

—Պիտի երթամ ֆոնկ իշխանին ոտքերն իշխու, պատասխանեց ցաւագին կերպով, Եթէ չգիտայ զաւկիս, անոր քով պիտի դառնամ մահուան պատրաստելու զինքը :

—Բայց Ես, տիկին, Ես :

—Դո՛ւք, հրկինք ներէ ձեզի, պարոն նախագահ :

Եւ տիկին Լիու ծոռեցաւ մանտարէնին տունէն, որ բնաւ փորձ չըրաւ զայն վար դնելու :

—Երկինք ներէ՛ մի ինծի, միմեաց Մէնկ աչքովն անոր հետեւելով . երկինք ներէ՛ մի ինծի : Այո, թող ներէ . բայց հիմակուհիմա նախամեծար պիտի համարէի որ Ն. Բարձրութեանէն գար այդ ներս մը : Օ՛ն, վերջին փորձ մը :

Այս խօսքերն արտասանելով զարկած էր ծնծղալի մը՝ ծառաները կանչելու համար : Ապեցին եկան :

Իրենց տէրն սպասցնելու տոնը չէր : Հրամայել որ դահաւորակը բերեն :

Քսան վայրկեան հտըր ունկնդրութիւն կը խնդրէր փոխարքայէն, բայց սա մերժեց ընդունիլ զայն : Իր սպաներէն մէկուն միջոցաւ պատասխան զրկեց թէ գիտէր իրեն ըսելիքները, և թէ իր որոշումն այնու մունաւանդ անդառնալի էր վասն զի զինքը կը նկատէր իբրեւ պատճառը իր նոր անհամաձայնութեանց անգլիացիներուն հետ :

Իշխանին համար յայտնի էր որ եթէ Մէնկ դատապարտած չըլլար երկու անմեղներ, Բերբինս նաւապետը

երբէք չպիտի զբաղէր անոնցմով : Հետեւապէս Չուի ա-
տելութեան առարկայ չպիտի ըլլար : Էջիշն երկկայմը
հանդարտօրէն պիտի կենար ի լամա : Հոնկ—Քոնկի կա-
ռավարիչը միտք չպիտի ընէր վերջնագիր մը զրկել իրեն,
և անգլիական երկու բրեկագներ չպիտի փակէին Պօք-
քա-Թիկրիսի անցքը :

—Նորին Բարձրութիւն ինծի յանձնեց ըսել նաեւ
ձեզ, յորեք թիկնապահ, որ խօսք կուղէ ձեռնէ առանց
իր հրամանին չհնաւանալ Քանդոնէն և գիշեր ցորեկ իր
տրամադրութեան տակ գտնուիլ :

Սոսկալով այդքան շուտ լեցուած տեսնելով ինքիւն-
քը անհատնում չարիքներով, որոց էն շնչինը կը բաւէր
զինքը կախել տալու, խոշոր մարգը խոստացաւ սպային
բոլոր ուզածները և զորս ելաւ զլիւսիկոր, իր ամարանո-
ցը գտնուելու համար :

Նոյն միջոցին տիկին Լիու, որուն նմանապէս ռեն-
կնդրութիւն տալ մերժած էր երեք նահանգներուն պե-
տը, իր աղջկան բովը կերթար :

Սրտապատար տեսարան մը տուա՛ց-եկաւ անոնց միջեւ :

Հակառակ մօրը պատի պատ խօսքերուն, Սօլ—Պը-
րօտէ հասկցած էր թէ ա՛լ բնաւ յոյս չկար : Միևակ,
այլ ևս դատապարտեալը չէր որ կը դուլար, ընդհակա-
ռակը քաջութեան օրինակ կուտար : Մէկ շնորհք միայն
խնդրեց, վերջին անգամ մը տեսնել ի—թէն, եւ գնաց
այն հիւանդանոցը ուր երիտասարդը կը գտնուէր միշտ,
թէեւ բուրդովին աղէկցած ըլլար գրեթէ :

Տիկին Լիուի հետ իր սենեակը մտնելը տեսնելով,
կրօնաւորը անոր դէմքէն անմիջապէս հասկցաւ յայտնե-
լիքը : Այն ատեն ասանց ձգելու որ խօսք տանէ, բռնեց
ձեռքը և ճակտէն համբուրելով, ըսաւ :

—Մի՛ լար, սիրեցեալս, մահը ոչինչ է անոնց
համար որ լաւ ապրած են : Բրկութիւն մը պիտի ըլլայ
մեզ համար :

Եւ ամբողջ ժամ մը անուշ խօսքեր ըրաւ աղջկանը
որուն սիրան հանդարտեցաւ և վերօտացաւ բոլոր կորո-
վը որով կուզէր սգեւորուիլ : Երբ իրարմէ բաժնորեցան,
գրեթէ ժպտաշուրթն, կը միմեջէին վերջին համբուրով մը :

—Քիչ տանէն, եւ առ յաւէտ :

Այս միջոցին, հոգեբանական երեւոյթով մը որուն
օրինակը շատ անգամ կընծայեն ամենէն երկչոտ մար-
դիկ երբ գտնուին անխուսափելի վտանգի մը հանդէպ,
Քանդոնի եղևոնադատ տանին մեծարոյ նախագահը քիչ
քիչ կը քաջասրտուէր :

Անշուշտ առաջին ակնարկով համակերպութեամբ
չլիտեց իրեն սպասող վիճակը : Բայց զրուին այնքան
տաքաւ, այնքան լաւ կոչում ըրաւ իր հպարտութեա-
նը որ վերջապէս համոզում գոյացուց թէ աղետաւոր
վայրկեանին հաստատութեան օրինակ մը պիտի հան-

գիտանար և այս կերպարանափոխումը կատարելէ հոք
ալ միայն իր գործերը կարգի դնել մտածեց :

Ասիկա զինքը զբաղեցուց շորս հինգ օր, այսինքն
պատժի գործադրութեան տոջի օրը մինչեւ, յետոյ,
իրիկուն ժամը տանին մօտ, գրեթէ յետոյ Բերքինսին,
այն օրն համբուրեց իր կինը կամ իր կիները, վասն զի
եթէ մեր առած տեղեկութիւնները ճիշդ են, զօրաւոր
պատճառներ ունինք հաւատարմութե Կէնկ բազմակնու-
թեան օրէնքը լիուրի ի գործ կը դնէր, եւ իր կոնտո-
լան իջաւ ուր տարածուեցաւ միմեջիւրով :

—Հաստ լաւ : վաղը պիտի ընդունիմ պամպուի հա-
րիւր հարուածները : Բայց այս անպիտան գործողութի-
ւէն առաջ, գոնէ անգամ մըն ալ պիտի ապրիմ իրիւ
ճշմարիտ Ձիւնացի մը որ բանէ մը չի վախնար, ոչ մահ
ուրէն ոչ ալ բարձրագոյն հրամաններէ :

Պաշտօնատարին թիափարները անշուշտ կարգախօս
մըն էին ընդունած, վասն զի անմիջապէս ծանուցան իրենց
թիափներուն վրայ եւ մակոյկը պատերազմական ժողբա-
ներուն մէջէն սուրաց դէպի շարք մը լոյսերու զորս կը
ցոլացնէին ալիքները : Նաւահանգստին ձախ ափին վրայ
Տըչ—Քօլի փօքը կ'ըլլին ընդ առաջ :

Տասը վայրկեան հոքը կը մտէր ծածանուտ քա-
ղաքներէն էն հետաքրքրաշարժը : Մակոյկը կը գտնուէր
հոշակաւոր ջրապատ շէնքերուն մէջ, այսինքն այն թա-
ղերն ուր կերթան զբօսնուլ ի Քանդոն : Թաղ որ խստիւ
արգիւտած է եւրոպացիներուն : (Շար.)

Ծ Ա ի Ս Ո Ւ Գ Ի Ր Ք Ե Ր

Հետեւեալ գիրքերը մեր խմբագրատան մէջ
կը ծախուին :

Լուսինեան Իշխան — Ֆրանսահայ Բառարան
դին 25 ֆր. ոսկեգրամ : Պուլկարահայ վարժա-
րանաց համար 20 ֆրանք :

Թ. Գ. Հինդլեյսին — Տեւոթկան և գործնական
Քերականութիւն Պուլկարերէն լեզուի 1 ֆր.

Ե. Մուրատեան — Քննական պատուութիւն
Արշակ Բ. ի և անոր Պապ որդւոյն. 2 ոսկէս ֆր.

Շէյքսպիրի Համլէթը, սղբերգ. 2 50 ֆր
Թրթուումներ (ոտանաւոր) 25 սնդ.

Հովաստեն " " 25 " "

Արամատեալութիւն " " 20 " "

Թապալաքեար Փիլիկ աղբօր հարսնիքը 60 սնդ.
Բարեկենդանի անկուտիները, կատակախաղ 1

արար 50 սնդ.

Մահճուպիլէթին միւլքեաֆաթը, գօմէտի պիր
բէրտէ, 50 սնդ.

Գագանճ գօճա եախօտ Էնֆիլէճի, գօմէտի պիր
բէրտէ, 50 սնդ.

Печатница "Взаимность" — Варна